№ 15 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼ 29

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼ 29 № 15

«ՉԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղուան, կէս տարուանը 6 ղուան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՉԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չէ 2 ժամը. (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական փողեր կլանողներ,—ՆԵՐՔԻՆՏԵՍՈՒԹԻՒՆ. Զէյթունի 1500 ռուբլին Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — Յայտարարութիւններ,—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դավրէժի կեանքից։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈՂԵՐ ԿԼԱՆՈՂՆԵՐ

—

Ուսումնարանի, եկեղեցւոյ կամ մի որ և իցէ նպատակով հասարակութեան մէջից հաւաքուած փողերի ուտելն ու մարսելը այնքան սովորական է եղել Հայերիս մէջ, որ այլ ևս ոչ ոք չի զարմանում, եթէ այս ինչ հոգաբարձուն կլանել է դպրոցի օգտին հաւաքուած փողը. ոչ ոք չէ յուզվում եթէ այն ինչ երեցփոխը մարսել է եկեղեցական դրամը, ոչ ոք չէ բողոքում երբ այն ինչ պարոնը երբէք հաշիւ չէ տալիս թէ ինչ եղան ի նպաստ այն ինչ հաստատութեան՝ կամ այն ինչ թշուառութեան՝ իր հաւաքած գումարները։

Երեցփոխանի եկեղեցւոյ փողերով հաբատանալը արդէն օրէնք է դարձել մեր մէջ. երեցփոխան ասել, գող ասելու պէս մի բան է և ամեն ոք գիտէ, հայկական ի բաքանչիւր քաղաքում իսկ կարելի է մատնանիշ անել անձերի, որոնք երեցփոխան են եղել և երբ այդ պաշտօնը թողել են, հարստութիւն են տարել իրենց հետ։

Նոյնպէս մատնանիշ կարելի է անել թէ Կովկասում, թէ Հայաստանում և թէ մեզանում անձեր, որոնք ի նպաստ այլ և այլ նպատակների հաւաքած փողերը դարձրել են իրենց եկամտի աղբիւր, հարստութեան հիմք և նրա վրայ կանգնել իրենց խայտառակ գոյութիւնը։

Ուտել ուրիշի փողը—դա ինքն ըստ ինքեան վատ բան է, բայց ուտել հասարակական փողեր դա արդէն անբարոյականութիւն է. մի անբարոյականութիւն, որի տէր անձին հարկաւոր է հասարակութեան միջից այնպէս դուրս շպրտել, որպէս շպրտում են մի բորոտի, մի վարակիչ հիւանդութեան։

Մենք առիթներ ունենալու ենք,—և հէնց այս համարից սկսած—փաստեր բերել ապացուցանելու համար թէ այդ տեսակ անբարոյականութիւնը որ աստիճան թագաւորում է հայ հասարակութիւնների մէջ, այնքան, որ մինչև իսկ հասարակական փող ուտողը, երբ իրեն ասում են այդ, բարկանում է, ասողին էլ «զրպարտիչ» անուանում, պատիւ էլ է պահանջում։ Կրկնում ենք, երբ մի երեցփոխան կլանում է մի եկեղեցւոյ դրամ, նրան մենք անուանում ենք գող ապա—շատ շատ—յանձնում դատարանի և այդպիսի գծուծ աւազակի հետ վերջացնում մեր հաշիւը. բայց երբ այդպիսի անբարոյականութիւն գործողներ հանդիսանում են այնպիսիները, որոնք հասարակական գործիչի և մինչև իսկ «ամենաազնիւ» և այլն տիտղոսն ունին, երբ նրանք, հասարակական փողերը ուտելուց յետոյ, հասարակական հիմնարկութիւններից օգտուելուց յետոյ, լրբութիւն ունին դեռ զայրանալ որ իրենց գող են կոչում, յանդգնում են «զրպարտիչ» անուանել իրենց ամբաստանողներին, երբ այդպիսի փչացած «հասարակական գործիչ» տիտղոսով անձերը դեռ շարունակում են հասարակական ասպարէզի վրայ մնալ և լրբութեամբ, իրենց կողոպտած հասարակութեան համար գործելու յաւակնութիւն ունենալ—ահա այդ երևոյթն է մեր մէջ, որ մարդու զայրոյթն է շարժում։ Մի՞թէ այն աստիճան ապականած հասարակութիւններ ենք կազմում մենք, որ թողնում ենք աճելու այդ տեսակ անբարոյական գործիչներին, որ էլի յանձնում ենք նրանց մեր հասարակական գործերից շատերը։

Եթէ մենք սկսենք թուել մի առ մի թէ որպիսի փողեր են կլանուել, որպիսի՞ թշուառներ կերակրելու յատկացած կոպէկ առ կոպէկ հաւաքած դրամներ են անբարոյականների ստամոքսը զգուել, այն ժամանակ հարկաւոր էր շատ և շատ «մեծ և ազնիւ» կոչւող անձերի դիմակներ պատառել։

Այսօրւայ մեր համարի մէջ տպւած «Զէյթունի 1500 ռուբլին» յօդուածը մատնանիշ կանի մի փաստի վրայ, իսկ ապագայում, երբ կարգը գայ աւելի նրբագ անբարոյական կլանողների, մենք—թող ապահովվինին—անխնայ ցոյց ենք տալու հասարակական փողերը և նրանց կլանող կամ կլանելու մտադրութեան մէջ գտնուողներին։

Մեր տնտեսական ոյժերը այնքան մեծ չեն և եթէ մեծ էլ լինին, ինչու թողնել որ մեր եղբայրները, մեր հասարակական հիմնարկութիւնները մեռնին, ոչնչանան դրամի պակասութիւնից, իսկ նրանց օգտին և նրանց անունով, նրանցից խլուած և նրանցից գողացած փողերով զգուելի արարածներ աթէնական գիշերներ սարքեն, իրենք ուտեն, որդիներին ուտեցնեն և ծիծաղեն հասարակութեան քթին։

Այդպիսի փաստեր տեսնել և լռելը—կը լինեը նոյնպէս անբարոյականութիւն։

Ուստի եւ մենք չենք լռիլ։ Հ. Հ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԷՅԹՈՒՆԻ 1500 ՌՈՒԲԼԻՆ

—

Մի քանի ամիս սրանից առաջ, այն է 1894 թուի հոկտեմբերին, Թիֆլիսում, դատաստանական գլխաւոր հիմնարկութեան մէջ, որ կոչվում է Սուդեբնայա պալատա, քննվեց մի հետաքրքրական գործ,—այն է «Նոր-Դար» թերթի խմբագիր Սպանդար Սպանդարեանի դանգատը «Մշակ» լրագրի» աշխատակից Խաչատուր Մալումեանի դէմ։ «Նոր-Դար» թերթի, կամ ինչպէս կովկասցիք ասում են, անանուն թերթի պ. խմբագիրը մեղադրում էր պ. Խ. Մալումեանին զբաղարտութեան համար։

Դա մի շատ հետաքրքրական և մի և նոյն ժամանակ ուսանելի գործ է, մանաւանդ, որ այդտեղ գլխաւոր հարցը պատում է Զէյթունի 1,500 ռուբլու շուրջը. ուստի հարկ ենք համարում «Շաւիղի» ընթերցողներին պատմել այդ գործի մասին։

Սրանից մօտ 10 տարի առաջ, այն է 1885 թուին, Թիֆլիսի «Նոր-Դար» թերթը ստորագրութիւն բաց արաւ Զէյթունցոց օգտին, որոնք հրդեհի զոհ էին դարձած, և հրաւէր կարդաց մեր Կովկասաբնակ եղբայրներին օգնութեան ձեռք կարկառել հրկիզեալ զէյթունցի-մի քանի նոր ընկերութիւնների երևան գալը։

Ընկերութիւնների կողմից՝ Դավրէժի հետ ոչ մի քաղաք չէ կարող մրցել։ Ոչ Պարսկաստանի մայրաքաղաք Թէհրանը և ոչ էլ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսը այնքան բազմաթիւ և բազմազան ընկերութիւններ չունին, որքան Դավրէժը։ Ի՞նչին վերագրել այդ արդեօք հասարակական կեանքի հասունութեան, յառաջադիմութեան թէ՝ հետևանք մի արտաքոյ կարգի զարգացման... Եթէ դիմելու լինինք նրանց գործունէութեան, նրանք իրենց գոյութեան կարևորութեան մասին վկայութիւն կը տան։

Ռուսաց յայտնի առակն ասում է—«Ասա ինձ ո՞վ է ընկերդ, ես կասեմ թէ դու ո՞վ ես» Դավրէժի ընկերութիւնների մասին կարելի է ասել— «Ասա տեսնեմ ո՞վ է նախագահ—կառավարող, ես կասեմ թէ ինչ գործունէութիւն կունենաս դու»... Դիմենք փաստերի։

Ընդամենը 5—6 հարիւր հայ տուն ունեցող Դավրէժը ներկայումս ունի հետևեալ ընկերութիւնները, որոնց սակայն մեղք է ընկերութիւն անուանել։ «Սէր» ընկ., «Բարեսիրաց» ընկ., «Ընթերցասիրաց» ընկ., «Բերդաթաղի զրաղարանական ընկերութիւն», «Վիլավայի ընթերցարանական ընկերութիւն», «Վիլավայի Հայուհեաց ընկ.», «Բերդաթաղի Հայուհեաց ընկ.», «Խնայողական» ընկերութիւն, «Լոյս» ընկերութիւն և «Խոհարարական» ընկերութիւն։ Վերջինը անցեալ տարի դիսաւոր ասողի նման յայտնեցաւ և մէկ թէ երկու շաբաթ գոյութիւն ունենալուց յետոյ՝ անյայտացաւ ընդմիշտ։ Բացի «Խնայողական»-ից՝ մնացած բոլոր ընկերութիւնները կազմել են բարեգործական նպատակով և սպառնում են ամբողջ Ներպատականը հեղեղել բարեգործութիւններով...

Գոյութիւն ունեցող բոլոր ընկերութիւնները—աննշան բացառութեամբ—պայմանաւորուածն անանկանութեան, ձևականութեան հետ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՎՐԷԺԻ ԿԵՍՆՔԻՑ

—

Երբ որ գրիչ ես վերցնում Դավրէժի հասարակական ներքին աշխարհի, առօրեայ երևոյթների մասին գրելու, իսկոյն այդ կեանքի ախուր կարիկատուրաների երկար շարքը իրենց տգեղ և անմխիթար տեսարաններով ներկայանում է առաջիդ... Մտածում ես.—Արժէ՞ այդ երևոյթները լրագրի նիւթ դարձնել և մի՞թէ տպագրելուց յետոյ իրենց բաւարար և ցանկալի լուծումը կը ստանան։ Ստիպւած ենք ախուր իրողութիւնը խոստովանել, որ Դավրէժում տպագրական խօսքը իր մոգական զօրութիւնը վաղուց կորցրել է մի շարք հաստակաշիների համար, որոնք լրագիրը կարդալուց յետոյ, մի դիւական քրքջիչ է լինում պատասխանը...

Միւս կողմից էլ չէ՞ որ լռելը, հասարակական պակասութիւնները տեսնելուց յետոյ լռելը, թէ անարեխղճութիւն է և թէ խրախուսանք վատ ընթացքի մէջ թաղուած անարժան գործիչների համար։ Մենք կը շարունակենք մեր գրչով երևան հանել հասարակական այս կամ այն պակասութիւնները, կը պատառենք դիմակաւորուած գործիչների կեղծիքը, որքան կը ներեն մեր համեստ ոյժերը հաւատացած լինելով՝ որ մի օր տպագրական խօսքը իր բարերար ներգործութիւնը ունենալու է թէկուզ հաստակաշիների վրայ անգամ։

—

Կարծես Դավրէժն էլ հետևում է Պոլսի մեր «ազգայինների» հոսոսական ընթացքին. ինչպէս Պոլսում սովորական է ամսական մէկ նոր լրագրի սունկի պէս բուսնիլը, ինչպէս սովորական է Պոլսի հռչակաւոր թաղական ժողովները, նոյնպէս Դավրէժում վերջին 3—4 տարին սովորական է դարձել տարեկան

ներին։ Այդ թերթը դեռ նոր էր սկսել հրատարակվել. Կովկասի հայք դեռ ծանօթացած չէին նրա խմբագրի սիրազործունեութեանց հետ, և մանաւանդ որ այդ ժամանակ չէին հրատարակվում ոչ «Մշակ» լրագիրը և ոչ էլ՝ «Արձագանք» թերթը, ուստի «Նոր-Դարը» սկսեց ստանալ նուէրներ՝ յօգուտ զէյթունցոց։

Թերթի խմբագիրը իր հրաւէրի հետ միասին իր թերթի էջերում յայտարարած էր որ փողերը անմիջապէս կուղարկվեն Թիֆլիսի նահանգապետի միջոցով ռուսաց Կոնսուլին, որ նա իսկոյն կարօտեալներին հասցնէ։

Փողերը հաւաքեցին, հրկիզեալների հարցը մոռացուեց,—և ամեն բան քնեց։

Անցաւ երկու տարի։ 1887 թուին Կովկասում սկսեցին նորից փողեր հաւաքել յօգուտ Զէյթունի կարօտեալց։ Հենց այդ միջոցին, Թիֆլիսի թերթերը հայոց «Արձագանք» և ռուսաց «Նովոէ Օբոզրէնիէ» լրագիրը լուրեցին, որ մի ժամանակ, այն է 1885 թուին, փող էր հաւաքուել զէյթունցիների համար, և հարց տուին «Նոր-Դարին»—ինչ էք արել այդ փողերը։ Նրանք ասում էին. փողերը հաւաքել էք, խոստացել անմիջապէս ըստ պատկանելոյն հասցնել. բայց մի անգամ գէթ չէք յայտնել թէ ուր էք ղրկել և ինչ էք արել, գոնէ այժմ ասացէք։»

Մի անգամ, երկու անգամ, տասն անգամ—հարցը սուր կերպարանք ստացաւ, և ամենքնել հասարակութեան մէջ՝ սկսեցին պահանջել, որ «Նոր-Դար» թերթի խմբագիրը հաշիւ տայ։ Թիֆլիսում եղողները պնդում են, որ նոյն իսկ այդ թերթի մօտիկ մարդիկ արդէն սկսեցին պահանջել, որ նա այդ մութ կէտը պարզաբանէ։

Երկար լռելուց յետոյ վերջապէս քաջարին Սպանդարեան ձայն հանեց. բայց ինչ ձայն. կասկածոտ, երդիմի, անորոշ... հասկացուեց, որ «բանի մէջ բան կայ»։ Ու այդ օրվանից Թիֆլիսի թէ հայ և թէ ռուս թերթերը սկսեցին անողոքաբար բացատրութիւն պահանջել։ «Նովոէ Օբոզրէնիէ» ռուսաց թերթը մինչև իսկ առակ շինեց այս խօսքերը. «փողերը, պ. Սպանդարեան. փողերը, ո՞ւր էք փախչում. կվիտանցիա, պ. Սպանդարեան, կվիտանցիա։»

Մեր ընթերցողները անշուշտ զարմացած կը մնան, թէ ինչու պ. Սպանդարեան բացատրութիւն չէր տալիս։—Տալիս էր. ինչպէս չէր տալիս. բայց այնպիսի խօսքերով. և ձևերով, որ ինչպէս ասում են, իր ձեռքով իր տունը քանդեց։

Առաջին անգամ նա ասաց. «մենք ուղարկել ենք ուր պարտաւոր էինք ուր ուղարկել։

Դրան ամենքը պատասխանեցին, որ պարտաւոր էիք Զէյթուն ուղարկել, բայց չէք ուղարկել։

Երկրորդ անգամ պ. Սպանդարեան յայտնեց, որ ուղարկել է Կ. Պոլիս՝ Սուվելոյ յանձնաժողովին։

Այն ժամանակ Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը պատասխանեց հետևեալը. «Մեր խմբագրատուն եկան Սուվելոյ յանձնաժողովի մի քանի անդամներ, և յայտնեցին, որ յանձնաժողովը Սպանդար Սպանդարեանից ոչինչ չէ ստացել երբէք։»

«Արևելքի» այդ պատասխանը Թիֆլիսի ռուս լրագիրները արտատպեցին, և պ. Սպանդարեանը ստիպված զգաց իրան, նորից ուրիշ բացատրութիւն տալ։

Երրորդ անգամ նա յայտարարեց, որ փողերը ուղարկել է Զմիւռնիա, մի վստահելի անձնաւորութեան։—Ախր ինչ վստահելի անձի,—հարցրին բոլոր թերթերը։ Եւ ահա այդտեղ սկսվեց մի կատաղեալ խաղ.—մի անգամ ասաց, որ փողերը ուղարկել է Զմիւռնիա, յայտնի հասարակական գործող Մատթէոս Մամուրեանին, յետոյ թէ՝ ուղարկել է Զմիւռնիայի առաջնորդ Մելքիսեդեկ Մուրադեանին, վերջը թէ՝ ուղարկել է Զմիւռնիա հարուստ սեղանաւոր Պալէօզեան էֆէնդուն...

Աչքակապութիւնը պարզ էր. փողերը չէին ուղարկված.—և «Նոր-Դար» թերթը նեղ վիճակի մէջ էր։ Եւ այս միջոցին Զէյթունի փողերի հարցը այլ ևս առակ դարձաւ. լրագիրների ֆելիեթոնիստները Սպանդարեանին ուղղակի ըսկսեցին անուանել «Զէյթունի հերոս», «Զէյթունի խնամատար». երբ փողոցով կանցնէր նա, նոյն իսկ աշակերտները և երեխաները սկսում էին գոչել «Զէյ յր թունի մարշ» կամ գոչել՝ «Զէյթունի փողեր, Զէյթունի փողեր։» Այդ ժամանակից արդէն այդ թերթը և նրա խմբագիրը խայտառակված, ծաղրի առարկայ դարձած, բոլորովին ընկան հասարակութեան աչքից և սլաւից։ Ամենքը համոզվեցան, որ Սպանդարը կերել է իր հաւաքած փողերը. և Զէյթունի հրկիզեալները մի կոպէկ անգամ չեն ստացել։ Միայն նեղ ընկած ժամանակ, նա բերել աւեց Հիւպատոսի միջոցով իր բարեկամ սրբազան Մուրադեանից մի թուղթ (Սպանդարեանը միշտ պաշտպանում էր այս սրբազանին, իբրև թիկնածու Ամենայն Հայոց Կաթուղիկոսութեան և չար լեզուները ասում են, որ դրա փոխարէն էր, որ սրբազանը ցգնեց նրան՝ այդ թուղթը տալով) որի մէջ ասված է, թէ այդ փողերը ուղարկված են և պահվում են մի վաճառականի մօտ, իբրև ապանդ և նրանով դպրոց պէտք է շինվի։—Հարցնող լինէր, 1885 թուին հրկեզելոյց օգտին հաւաքած փողերը, ինչ գործ ունէր 1887 թուին Զմիւռնիայում, մի վաճառականի մօտ, այն էլ դպրոց շինելու համար.... Եւ տեսէք թէ մինչև այժմ էլ, 10 տարի է անցել, դպրոց էլ չը կայ, և երբէք էլ չի լինի անկասկած....

—

Այժմ «Շաւիղի» ընթերցողը կը հարցնէ. «լաւ, Սպանդարեանը փողերը կերաւ—բայց այդտեղ ինչ գործ ունի Խաչատուր Մալումեան, «Մշակի» աշխատակիցը։ Ահա թէ ինչ։

1889 թուին, ուրեմն չորս տարուց յետոյ, Թիֆլիսում մի համակրելի ընկերութեան,—անունը Հրատարակչական ընկերութիւն է,—ընտրութիւնների ժամանակ՝ անդամ ընտրվեց, ի միջի այլոց և այդ պ. Սպանդարեանը։ Պ. Խ. Մալումեանը զրեց այդ առթիւ «Մշակի» մէջ մի յօդուած, ասելով, որ ամօթ է, անպատուութիւն է, մի գրական-ընկերութեան անդամ ընտրել այնպիսի մի մարդ, որ մեղադրվում է փող գողանալու համար, որը անպատուութիւն է բերում հայոց գրականութեան, որի անունը նոյն իսկ թերթերը չեն յիշում, որը բոլոր ընտրութիւնների ժամանակ սևացել է։ Այդ յօդուածի դէմ էր, որ գանգատվեց «Նոր-Դարի» ծաղրի առարկայ դարձած խմբագիրը, գրելով, որ պ. Մալումեան իրան զրպարտել է։

Գործը շատ երկար քաշեց և վերջապէս 1892 թուին քննվեց առաջին անգամ Թիֆլիսի Օկրուժնոյ սուդի մէջ, որտեղ պ. Մալումեան ներկայացաւ։ Այն ժամանակ պ. Սպանդարեան, դժգոհ մնալով այն վճռից,—նոր գանգատ աւեց բարձր ատեանին, Սուտերնատ պալատին, ուր և այդ գործը քննվեց, ինչպէս վերև ասեցինք, անցեալ 1894 թուի հոկտեմբերին։ Սակայն այս անգամ գործը չաւարտվեց, և յետաձգվեց մի քանի ժամանակով, որովհետև ինչպէս Թիֆլիսի թերթերը հաղորդում են, այնքան շատ դատաւորներ, ապացոյցներ էին ներկայացրված ատեանին, որ երկար ժամանակ է պէտք այդ ամենքը ուսուցելու համար։

Թեֆլիսի թերթերից երևում է, որ պ. Մալումեան ներկայացրեց բազմաթիւ փաստեր, որոնք ապացուցանում են թէ պ. Սպանդարեան փողը չէ հասցրել նշանակին, որ ամբողջ Կովկասի մամուլը մեղադրել է նրան իբրև Զէյթունի փող ուտող *), որ ինքը պ. Սպանդարեան յայտնեց դատարանում, թէ ճշմարիտ է, ամենքն էլ իր մասին այնպէս են կարծում և մտածում,—և պ. Մալումեանի փաստաբանը այդ հիման վրա պահանջում է երկին տրգարացնել մեղադրվածին, որովհետև նա միայն կրկնել է այն, ինչ որ արդէն շատ տարի առաջ ամենքը ասել են և գրել են։

Պ. Սպանդարեանի փաստաբանը առաջարկում է մեղադրել պ. Մալումեանին զրպարտութեան համար։ Նա ի միջի այլոց, ներկայացրել է մի թուղթ, որ ստացել է Կ. Պոլսից այն մասին թէ փողերը այնտեղ ստացել են։ Բայց այդ թուղթը մամուլի մէջ ծիծաղ յարուցեց, որովհետև նա գրված է 1890 երրորդական ման անգամ չ'կարողացաւ ծախել. իսկ վաճառած տոմսակների ալբերը երկար սպասելով՝ բողոքեցին և կարծեմ նրանցից մի մասը արդէն յետ է ստացել փողերը։ Անցեալ 94 թուին, ընկերութիւնը ունէր ընդամենը 8 անդամ և 17 դուռն մայր—դումար։ Զգիտենք ինչ հաշիւներով, Ատրպատականի առաջնորդը իր նախագահութեամբ, զուցէ քարեգործի էժանագին հռչակ վաստակելու նպատակով—«Սէր» ընկերութեան 94թ. տարեկան ընդհանուր ժողովը առաջնորդարանում հրաւիրեց, որտեղ երևի առաջնորդի ազդեցութեամբ, անդամների թիւը հասաւ 27-ի։ Ներկայ տարուայ սկզբից՝ ընկերութիւնը իր բոլոր հարստութիւնը—ընդամենը մի քանի թիւման— ուղարկել էր զրքերի որով ուզում էր Դավրէժում զրավաճառանոց բացել և նրանով կրթել ամբողջ Դավրէժը։

Մինչդեռ Դավրէժում ձրի զրքեր ես առաջարկում, հազիւ կարդացողներ են լինում մինչդեռ ամենաչնչին վարձով—տարեկան 2 դուռն Լիլավայի ընթերցարան—ընթերցանութեան նիւթ ես առաջարկում, յամախողներ չեն լինում. մինչդեռ Բերդաթաղում «ընթերցասիրաց» ընկերութեան ձրի ընթերցարանը «երկուղոյզ մի կէնդ» յամախող ունի, «Սէր» ընկերութիւնը դրավաճառանոց է բացում Համիտի, Մոկրէթի և այլն նման զրքերը՝ փողով ծախվող... այնպիսի զրքեր, որոնց կարդացողները մատով են հաշվում Դավրէժի մէջ։ Ահա այդ է եղել «Սէր» մեծարգոյ մեծանունը կրող կրթական, բարեգործական ընկերութեան չորս երկարաձիգ տարուայ բարեգործութիւնը։ «Սէր» ընկերութեան տնօրէն—նախագահն է «Արամեան» դպրանոցի ընթերցաւարտ՝ Սեդրակ Միրզոյեան։

(Կը շարունակուի)

իրականապէս—աւելի ոչինչ։

Ամենից առաջ խօսենք «Խնայողական» ընկերութեան մասին, որը շնորհիւ իր նպատակի՝ ամենից հարուստ, ամենից կենդանի և գործունեայ ընկերութիւնն է Դավրէժում, եղածների մէջ։

«Խնայողական» ընկերութիւնը հիմնուել է անցեալ 94 թուին, առկտական—շահագիտական նպատակով։ Շնորհիւ այդ ձեռնտու նպատակի, ընկերութիւնը Դավրէժում մէկ տարուայ ընթացքում 1500-ի չափ տոմսակ-բաժնետոմս է բաց թողել։ Այդ ընկերութեան անդամ են դրուել Դավրէժում և բուրժուան—եթէ կարելի է այդպէս անուանել Դավրէժի ձրիակերներին—և վաճառականը, և գործակատարը, և արհեստաւորը, և մշակը, և ուսուցիչը և աշակերտը... մի խօսքով Դավրէժի բոլոր դասակարգի ներկայացուցիչները։ Եւ գիտէք, ընթերցող, ինչու համար են այդքան զրաւվել այդ ընկերութեամբ,.. ապագայի մեծ-մեծ յոյսերով։ «Խնայողական» ընկ. Տնօրէնն է Նաղար-Էֆենդի Գորոյեան։

—

«Սէր» ընկերութիւնը հիմնուել է 1891 թուին իր ոյժերից շատ վեր ծրագրով—նպաստել և առաջ տանել ամբողջ Ատրպատականի—թերևս ամբողջ Պարսկաստանի—Հայոց Կրթական գործը.... Բոլորելով իր գոյութեան չորրորդ տարին, այդ ընկերութիւնը գրեթէ ոչինչ չէ արել ոչ թէ Ատրպատականի այլ նոյն իսկ Դավրէժի կրթական գործի համար։ Նրա արածը եղել է 1892 թուին մէկ ճիւաղ ուսուցիչ ուղարկելը Սալմաստի Մահլամ գիւղը, որտեղից նրան իր վատ ընթացքի համար, թակելով դուրս վռնդեցին անժամանակ և որը իր վերջին հերոսութիւններով Դավրէժում մեծ հռչակ ստացաւ։ 1893 թ. մի մեծ վիճակախաղ էր ուզում սարքել ընկերութիւնը բաւական խոշոր—5000 թիւմանի—դումարով որի (ինչպէս և սպասելու էր) մի տասնվեցերորդական մասն անգամ չ'կարողացաւ ծախել. իսկ վաճառած տոմսակների ալբերը երկար սպասելով՝ բողոքեցին և կարծեմ նրանցից մի մասը արդէն յետ է ստացել փողերը։ Անցեալ 94 թուին, ընկերութիւնը ունէր ընդամենը 8 անդամ և 17 դուռն մայր—դումար։ Զգիտենք ինչ հաշիւներով, Ատրպատականի առաջնորդը իր նախագահութեամբ, զուցէ քարեգործի էժանագին հռչակ վաստակելու նպատակով—«Սէր» ընկերութեան 94թ. տարեկան ընդհանուր ժողովը առաջնորդարանում հրաւիրեց, որտեղ երևի առաջնորդի ազդեցութեամբ, անդամների թիւը հասաւ 27-ի։ Ներկայ տարուայ սկզբից՝ ընկերութիւնը իր բոլոր հարստութիւնը—ընդամենը մի քանի թիւման— ուղարկել էր զրքերի որով ուզում էր Դավրէժում զրավաճառանոց բացել և նրանով կրթել ամբողջ Դավրէժը։

Մինչդեռ Դավրէժում ձրի զրքեր ես առաջարկում, հազիւ կարդացողներ են լինում

*) Մանաւանդ Թիֆլիսի «Նովոէ Օբազրէնիէ» ռուս թերթը. տարօրինակը այն է որ Սպանդարեանը վախենում է այդ թերթի դէմ դատ բաց անել, չը նայելով որ նա Մալումեանից աւելի կծու լեզուով էր խօսում իր դէմ։

թիւն, այն է պ. Մաքլեմեանի յոգնածից մի տարի յետոյ։ Ամենքն էլ ասում են, թէ ինչ նշանակութիւն ունի լեռին թւով բերած թուղթը, և երկրորդ՝ եթէ այդ թուղթը կար, ինչու պ. Պատանդարեան չը նկարագրեց 1892 թւին, Օկրուժնոյ սուղին։ Դրանից կասկած է առաջացել, որ սուրեմն նոյն իսկ այդ թուղթը 1892 թւին էլ չը կար, թէև գրված է 1890 թւի անունով...

Այս բոլորը ապացուցանում են որ Պատանդար Պատանդարեան, «Նոր-Փարի» տիրահռչակ խմբագիրը, 1885 թւին հաստաքած փողերը տեղ չի հասցրել. այն էլ ինչ փողեր, խեղճ, քաղցած, մերկ դեղթունցու փողերը...

Բայց ասենք. ուրեմն դատարանը ինչ է և արդարադատ մի օր անշուշտ նա կը պահանջի պ. Պատանդարեանից այն փողերը և այն ժամանակ, ինչպէս ասում են «պայն եկել ու տարել է նրան։» Ահա Զէյթունի 1500 բուրլու ամբողջ պատմութիւնը, որ արեցինք «Շաւիղի» ընթերցողների համար։ Ճշմարիտ չէր, ընթերցող, որ ինչպէս մեզ վերև ասացինք, այս պատմութիւնը և հետաքրքրական է և ուսանելի։

Պարսկահայ ընթերցողը կարող էր կրը և իսկ երևակայել, որ հայ-խմբագիրը սոված քաղցած մարդոց փողերը կուտի և տեղ չի հասցնի։

Խորհելու բան է սա։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Արձագանք» № 37-ում, մի պարոն, որ վախենալով իր սեռից չէ ստորագրել, հաղորդում է մի քանց հետաքրքիր խոշոր ստութիւններ։ Քիչ ընթերցողները գիտեն, որ Թէհրանում իր «ազնիւ» (!!!) գործունէութեամբը յայտնի Վահան Մեսրոբեան անունով մի տարած, մի օր ծեծ կերաւ մի 15 տարեկան պարսիկ պատանուց. այդ դէպքը պատահեց «Շաւիղի» տպարանի տան առջևի փողոցում և Մեսրոբեանը իրաւունք համարեց իրեն կարծելու, որ «Շաւղի» արտօնատէրն էր ծեծելու թելադրողը։ Գործը դատաստանի ընկաւ։ Այժմ «Արձագանքի» լրատուն հաղորդում է, որ իբրև թէ քննութիւն կատարեց և ձերբակալած սրիկաները խոստովանեցան որ իրենք կատարեցին այդ վայրենութիւնը «Շաւիղի» արտօնատէր Անդրէաս Բէկնազարեանցի թելադրութեամբ»։ Այդ լուրի մէջ ոչ մի ճշմարտութիւն չը կայ, որովհետև ծեծողը մէկ անձ էր, մի պատանի, որ ազատ՝ իր գործին է այժմ իսկ, և դատավարութեան մէջ խայտառակուողը միմիայն Վահան Մեսրոբեանն եղաւ. ի դէպ է ասել, որ այդ Մեսրոբեան կոչուող արարածը նա է, որ կլանել է պ. Պռոշեանի՝ Ընթերցասիրաց ընկերութեան նուիրած գրքերը։ Դատը վաղուց վերջացել է և տէրը միայն գիտէ թէ Մեսրոբեանի վրայ որքան մազ մնաց դատից լեռոյ. այժմ մնում է բարեմազթել Մեսրոբեանին որ նա լաւ մաքսէ իր կերած ծեծը։

—

«Արձագանքի» նոյն հպմարում մի և նոյն պատմութիւն բատուն, կամենալով վերաւորած ընել նաև պ. Վ. Փափազեանցին էլ. ասում է որ նա պատճառ է լինում Թէհրանի Հայկազ. դպրոցի փակուելուն և որ ճա մի կիսախելագար անձնական է։ Հայկազ. դպրոցը փակ չէ. նա փառաւոր կերպով շարունակվում է և շուտով էլ իր տարեկան քննութիւնները կը տայ, շնորհիւ նոյն իսկ պ. Վ. Փափազեանցի և իւր միւս պաշտօնակիցների։ «Արձագանքի» ածականը պ. Վ. Փափազեանցի ծիծաղն է միայն շարժում, որովհետև նա ամենքից լաւ գիտէ թէ որպիսի մարդիկ միայն գովեստ են ստանում այդ թերթում։ Մեր շնորհաւորութիւնները ուրեմն «խելօք» լրատուին և բոլոր նրանց, որոնք խելօք են համարվում «Արձագանքի» մէջ։

—

Թէհրանի Դավլաթի թաղի հայ դպրոցը, որը գտնվում է յայտնի մանկավարժ Գասպարեանի ձեռքում, սկսել է իր տարեկան քննութիւնները։ Թուրթակների լսել այդ քննութիւնների ժամանակ՝ կարելի է, բայց կրթված և մի բան սովորած աշակերտ տեսնել՝ անսպասելի։ Ց. Գասպարեանը եթէ ապագայ սերունդ չը ոչնչացնի, նրան կը բերելուց շատ և շատ հեռու է։ Փշից խաղող չեն քաղում։

—

«Արձագանքը» հաղորդում է որ մեր զա Մեսրոպ-խան Մեսրոպեան, Բաքվի ընկերութեան նախկին քարտուղար, այժմ տնօրէնն և այլն և այլն... արժանացել է «գեներալութեան» աստիճանի, որ այդ երիտասարդ «գեներալը» հմուտ է հայերէն լեզուի մէջ (!!), իսկ կատարելապէս (չը գիտէինք այդ) ուսումնասիրել է ֆրանսերէն, պարսկերէն... չինարէն, եսալօներէն... լեզուները... Եւ այդպէս, խեղճ Բաքվի ընկերութեան քարտուղարներ և տնօրէններ, որոնք այժմ սկսել են գեներալներ լինել, բազմաթիւ լեզուներ գիտենալ և որը առաւելն է, «Արձագանքի» մէջ հանուր աշխարհին ներկայանալ։

—

Դավրէժից մեզ գրում են որ «Սէր» ընկերութեան գրավաճառանոց բանալու միտքը անիրագործելի մնաց». Առհասարակ Դավրէժում եղած զանազան ընկերութիւնների մասին մեր ընթերցողներին գաղափար տալու համար, այս համարից սկսած տպագրում ենք մի ամփոփ ուսումնասիրութիւն։

—

Կ. Պոլսի «Հայրենիք» թերթի մէջ կարդում ենք հետևեալ շատ հետաքրքիր զեկուցումներ։ «Երէկ առաւօտ թիւրք թերթերուն մէջ հրատարակուած պաշտօնական զեկուցում մը կը ծանուցանէ թէ, շնորհիւ վեհ. սուլթանին, Հալէպի, Մամուրէթ իւլ Ազիզի, Էնկիւրի, Տրապիզօնի, Երզրումի, Դիարբէքիրի, Վանի, Գասթամբոլի և Պիթլիսի նահանգներուն մէջ՝ հանրային անդորրութիւնը վրդովող ոչ և է դէպք պատահած չէ»։ Նոյնատեսակ զեկուցումներ կան «Հայրենիքի», № № 1118, 1126, 1127, 1129, 1120, 1121, 1122, 1123, 1124 և 1125 համարներում։ Կարծում ենք. որ «Քրքկեն թէրթերի» այդպիսի «պաշտօնական» զեկուցումներից յետոյ, էլ կասկած չի կարող մնալ որ Հայաստանում ոչ և իսկ «հանրային անդորրութիւն վրդովող դէպք» պատահած լինի, «շնորհիւ վ. սուլթանին»։

—

Մարաղայից գրում են հետևեալը։ Ս.հա 10—15 օր է որ յաճախ անձրևներ տեղալով, ճանապարհների երթևեկութիւնները առայժմ դադարած են. ուղտ բոլորովին չի գալիս և այդ առթիւ Արտաբիլ տանող քարահը որ միշտ 15—20 դրան կը լիներ, շատ թանկ է, 16—30 դրան, տեղս բոլոր հայ վաճառականութեան մօտ կայ պատրաստի 10,000 բեռ սաւզայ, իսկ սաւզան այժմ շատ թոյլ է ռուսաց թղթադրամի պակասելու պատճառաւ. ամենալաւ սաբզան արժէ 3 դրան 40 կոպէկ։

—

Թէհրանում, պ. Ղուկաս Յովսէփեանը իր հօր մահուան քառասունքի ոգեթիւ հացկերոյթ պիտի տար, բայց փոխանորդ վարդապետի յորդորանքով այդ ճաշի փոխարէն 100 թուման ընծայեց Վանաք գիւղի դպրոցին։ Գովելի է։ Այս առիթով յորդորում ենք փոխանորդ վարդապետին, որ իր ուշադրութիւնը դարձնի Վանաք գիւղի դպրոցի վրայ և ազատի նրան այժմեան տիրացու ուսուցչի ձեռքից։

—

Դավրէժից, Ատրպատականի առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսի հեռանալու մասին գրում են, որ հիւանդութեան պատճառով խնդրագիր է տուել վեհ. Կաթուղիկոսին և իբր «արձակուրդ» հեռացել է իր թեմից դէպի Օդեսսա գնալու։ Թեմական պառաջնորդի փոխանորդ նշանակուել է Սարաջեան Յովսէփ վարդապետը։ Դա այն վարդապետն է որի մասին «Մշակում» լուր էր տպված թէ ջամանեան հիւսպատոսը հայր Սարաճի խելքին շատ հաւանել է։

—

Մարաղայից մեզ գրում են։ «Լսում ենք որ Ն. Կ. Մ. Թագաժառանգ իշխանը մայիս ամսի վերջերին ժամանելու է այստեղ. սկսել են փողոցները մաքրել։»

—

Սալմաստից, կրթական տեսուչ Մ. Աւիտեսեանի մասին մի լուր է հասնում մեզ, որ սոսկացնում է. եկող անգամ կը տպենք թղթակցութիւնը, գարմանում ենք սալմաստցիներից թէ ինչու կառավարութեան չեն դիմում դուրս վռնտելու իրենց միջից այդ աւազակին։

—

Թէհրանի Հայկազ. դպրոցի Ուսուցչական խորհուրդը վճռել է մայիսի 15-ին սկսել քննութիւնները։ Մայիսի 1-ից դատարեցվում են դասերի ընթացքը և 15 օր կրկնութիւններ են լինելու։ Ամենից առաջ տեղի կունենան պ. Վ. Փափազեանցի դասերի քննութիւնը։

—

„Մշակի“ մէջ կարդում ենք հետևեալը։ „Ինչպէս յայտնի է, անցեալ տարի՝ Զեկպդջի ցուցահանդիսում Պարսկաստանը ունէր մի առանձին բաժանմունք։ Պարսկաստանի կողմից պատուիրակներ կամ կոմիսէրներ նշանակվել էին Թաւրիզեցի վաճառականներ՝ Սրշակ և Ալեքսան Գօրգեանց եղբայրները, որոնք յանձն էին առել իրանց հաշուով կազմակերպել պարսկական բաժինը։ Այդ բաժնում ի ցոյց էին դրվել պարսկական հին և նոր արուեստի գործեր, բնական բերքերի, արտադրութիւնների, գեղեցիկ գորգեր (թէ բրդէ և թէ մետաքսէ), զենքեր, յաղճապակէ ամաններ, աղիւսներ, տիպաճոներ, ձեռագործներ և այլն։ Այժմ, ինչպէս մեզ հաղորդում են, բոլոր այդ էկսպոնատները ստացել են ոսկէ մեդալներ, դիպլոմներ և grand-prix; թւով 66 հատ։ Նոյն աջողութիւնն ունեցել է պարսկական բաժինը նաև Սանվերսի ցուցահանդիսում“։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս մի անգամ էլ ասել եմ, կանանց հարցը այժմ Եւրոպայում այրող, օրեայ հարցերից մէկն է. թեր և դէմ յօդուածներ երևում են իւրաքանչիւր ամսագրի մէջ։ Հետաքրքիր չէ արդեօք թէ կանայք այժմ ինչ իրաւունքների են կարողացել հասնել զանազան երկիրներում։

Յայտնի է, որ քիչ ժամանակ սրանից առաջ, հարաւային Աւստրալիայում կանանց էլ քւէարկութեան իրաւունք տուեց—ինչպէս որ 1893 թւից ի վեր դա եղել է արդէն Նոր-Զելանդիայում— քաղաքական գործերի մէջ։ Քւէարկութեան արդիւնքը այն էր, որ յաղթող կուսակցութիւնն եղաւ արմատական—սոցիալիստ կուսակցութիւնը և ապշութեան մէջ թողեց շատերին։ Անգլիայում, այդ խնդրի համար սկսուեց մի խիստ վիճաբանութիւն և Ջոն Հալլ (1893-ի կանանց իրաւունքների մասին ձեռներէցութիւն անողը) որ Աւստրալիայումն է, պատասխանելով շատ թերթերի հարցերի, գտնում է որ կանայք պատրաստ են օգտուելու իրենց իրաւունքներով և որ պարլամենտական ընտրութիւնների այդ յաջող ելքը այս անգամ պարտաւոր են կանանց՝ քւէարկութեան մասնակցելուն։

Անգլիան էլ այդ ուղղութեամբ առաջադիմում է. իսկ Ամերիկան արդէն շատ առաջ է։ Վիոմինգի կանտոնում 1889 թւից սկսած կանայք գտնվում են կրթական գործի կառավարչութեան մէջ և Միսս Ռիլը ժողովրդային լուսաւորութեան գլխաւոր կառավարիչն է։ Կոլորադոում, ուր 1893 թւից կանայք հասել են քաղաքային իրաւունքների, վերջին պարլամենտական ընտրութիւնների ժամանակ 3 կանայք ընտրեցին պարլամենտի անդամ—Միսսիս Ֆրէնցիս Կլոկ, Միսսիս Կլարա Կրէյսինգէմ և Միսիս Կարրի Հոլլ դէ Պուէբլօ։ Երկրորդ տիկինը իր ճարտարախօսութեամբ արդէն մեծ ժողովրդականութիւն է ձեռք բերել։ Սոյն երկրում Միսսիս Պիրի տիկինը ժողովրդային լուսաւորութեան գլխաւոր կառավարիչն է (որպէս մինիստր՝ միապետական երկրներում)։ Այժմ եթէ աչքներս դարձնենք դէպի Նոր-Զելանդիա կը տեսնենք որ քաղաքային վարչութեան մէջ կանայք ձայն ունեն,

իսկ վերջերս Միսսիս Եատիս անունով մի տիկին ընտրուել է Օնեգունդ-քաղաքի քաղաքապետ։ Սա առաջին դէպքն է ամբողջ աշխարհում, բայց յոյս կայ որ վերջինը չի լինիլ։ Կանայք սկսել են ըմբռնել իրենց իրաւունքները և այդ շատ ուրախալի է. մարդկութեան կէսը սկսում է ազատուել իր ստրկական դրութիւնից, փշրելով այն շղթան, որ ստացել է տղամարդից։

*** Ամուսնական խնդիրը հայոց մէջ, նորից սկսել է արծարծուել՝ հայկական այն թերթերի մէջ, որոնք ազատ են խօսելու նրա մասին։ «Հայրենիք» թերթը աշխոյժով շարունակում է սիրուն և համոզիչ առաջնորդողներով շոշափել ապահարզանի, հաս—չը հասի հայրն ամուսնութեան վերաբերեալ հարցերը գովելի ազատամտութեամբ։ «Շաւիղը» մօտակայ համարներից մէկում կ'արտատպի նրանից զաւառական մի շահագրգիռ յօդուած այդ մասին, բայց ահա այս անգամ թերթի մի առաջնորդողից մի կտոր, որ ասում է կատարելապէս այն բոլորը, ինչ որ մենք կուզէինք կրկնել և կրկնել միշտ։

«Ամուսնութեան վերաբերեալ խընդիրներով շատ կը զբաղինք, վասնզի մեր եկեղեցին իրաւասութեան ամենաընդարձակ սահմանին մէջ գտնուող ամուսնական օրէնսդրութեամբն է որ մենք հայերս երեսն կը հանենք արդարասիրութեան մասին մեր ըմբռնումն, եւ ընկերական իմաստասիրութեան մէջ մեր գաղափարները։ Ժողովուրդ մը իրեն յատուկ եղած օրէնսդրութեամբն է որ ցոյց կուտայ թէ ընկերական յառաջդիմութեան սանդուղքին ո՞ր աստիճանին վրայ հասած է։ Ամուսնական գանգան կարգի խնդիրները, զոր շարունակ կը ներկայացնենք, կարեորութիւն ունին նամանաւանդ անոր համար որ ցոյց կուտան թէ մենք ո՞րքան անզարգացած ենք և գաղափար չունինք թէ ինչ է «անհատին բնադիր իրաւունքը», ինչ է «արդարութիւնը»։ Մենք բնաւ այս դարուս մարդերը չենք»...

Եւ հէնց դրա համար է որ ոչնչանում ենք, մտաւորական անշարժութեան մէջ փտում, հոտում և ճմլվում այնպիսի ազգերից, որոնք քայլում են և իրենց քայլերի տակ կոխ տալիս այն ամէնը ինչ որ իրենց նորանոր պահանջներին չէ համապատասխանում, որոնք իրենց արգելք են լինում։ Չը կայ մի սրբութիւն որ եղած չը լինի մարդկութեան համար. մարդիկ իրենց պահանջների համար փոխում են ամէն, բացարձակապէս ամէն ինչ. որովհետև ոչ թէ մարդն է օրէնքի համար չինուած, այլ օրէնքը մարդու համար։ Վայ նրան ով այդ ճշմարտութիւնը ըմբռնելու ընդունակութիւն չ'ունի։

*** Ամուսնական խնդրի պէս այժմ այրող հարց է դարձել հայերի մէջ այն երևոյթը, որ հայ կղերը ծայրահեղ ապականութեան է հասել. աջ ու ահեակ նա վնասներ է որ տալիս է ազգային այնպիսի հաստատութիւնների, որոնք դժբաղտաբար նա իր իրաւասութեան տակ ունի։ Չէ՞ որ ամուսնական դրութեան այդ աստիճան անշարժութիւնից փտողանպէտք լինող վիճակը կրօնաւորութիւնից է առաջ եկել. նա է որ սխոլաստիկական շղթաներով կաշկանդում է ընկերական կարեւոր խնդիրները, նա է որ կրթութիւնը դարձրել է ապիկարների շահու աղբիւր. նա է որ ժողովրդի տենդոտ երեւակայութիւնից օգտուելով, նրա տնտեսական ոյժերն է սպառում։

Այս երևոյթները այնքան չեչտել են, որ ամենաթունդ կրօնամոլ, կղերասէր և կաթուղիկոսի ու այլ կրօնաւորների ոտքերը լզող ու նրանց քծնող թերթերն անգամ արձանագրում են փաստեր։ Օրինակ հէնց «Նոր-Դարը», որի № 57-ում Ա. Ազապեան ստորագրութեամբ մի լաւ յօդուածի մէջ տպագրում է այսպիսի խիստ խօսքեր.

«Վատ ճանապարհ է բռնել մեր կուսակրօնների ահագին մեծամտութիւնը՝ դրանց հոգու միակ սնունդը սնափառութիւնն է դարձել. ոչ դպրոցներ են բաց անում, ոչ լուրջ գրական վաստակներ են տալի, ոչ էլ վանքական հողերի մասին են ցաւում։

Առանց օգտաւէտ գործ կատարելու, թեթեւագին ժողովրդականութեան տենչանքով տոգորուած, առանց տանջուելու, վաստակելու, հրամայող դառնալ—այսինքն՝ աշխարհային այն տեսակ ձգտումների ետեւից են, որ աւետարանն ամենայն խստութեամբ հալածում է։

Եւ երբ բաւական թւում է մեր կուսակրօնների սխրագործութիւնները, զայրացած գոչում է։

«Հայ-հարայ աբեղաներ, վարդապետներ են որ ձեռնադրում են, և դրանց գործերին նայողն ակամայ գալիս է այն տխուր եզրակացութեան, թէ դրանք բոլորն էլ, աննշան բացառութեամբ, կեանքի դժուարութիւններից փախուստ տուած բաղդախնդիրներ են»։

Կրօնական-պահպանողական թերթի այս խօսքերն էլ արդեօք չէ կարդում հայոց կաթուղիկոսը, որ «հայ-հարայ» աբեղաներ է որ ձեռնադրում է...

Ղ. Ֆ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Թիանցին. 1 մայիս. (Ն.տ.) Կայսրը Լիհունգ-Զանգին մայրաքաղաք կանչեց. խաղաղութեան դաշինքի կնքելը հաւանական է։

Լոնդոն. 1 մայիս. Վերջին լուրերի համեմատ Նիկարագուան համաձայնուելէ վճարել անգլիացոց պահանջած վնասը, նրանց Կօրինթօն դատարկելուց մի շաբաթ յետոյ։ «Times» հեռագիրներ է հրատարակում Քօրից, հաստատելով որ ժապոնական նախարարութիւնը վճռել է ընդդիմանալ ռուսական ոտնձգութիւններին։

Լոնդոն. 2 մայիսի. Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է Զանխայից, որ Քօրմոզա կղզին դիմել է անգլիական կառավարութեան, խնդրելով որ արգիլ է ժապօնացիներին կղզին գրաւելու. դրա փոխարէն հանքերից մեծ օգուտներ է առաջարկել։ Անգլիան չէ ընդունել այդ առաջարկը։

Լոնդոն. 4 մայիս. «Times» լուր է տալիս որ Չինական կայսրը երեքշաբթի օրը վաւերացրել է խաղաղութեան դաշինքը։

Լոնդոն. 6 մայիս. Ժապոնիան եւրոպական կառավարութիւններին պաշտօնապէս տեղեկացրել է որ նա չէ ընդունում այն պահանջը, որ եղել է նրանից Լիաթունկ թերակղզին և Պորտ Արտիւրը թողնելու համար։—Եւրոպական պետութիւնների նաւատորմիղները հաւաքվում են Չէֆու. ռուսական 8 նաւեր արդէն Չէֆու են հասել։

Վաշինգտոն. 5 մայիս. Այստեղ լուր է պատում որ Ժապոնիան ընդունել է պահել իրան միայն Լիաուանդի վերջին կտորը, նաև Թալիէնվանը. բայց պահանջել է որ չինացին աւելացնի իր վճարելիք պատերազմական դուգանքը։

Փարիզ. 7 մայիս. Ֆրանսիան բանակցում է Ժապոնի հետ, պահանջելով որ նա սահմանափակի իր պատերազմական նաւերի թիւը, որոնք գտնվում են Քորմոզայի և Պեսկատորի մօտ։

Հօնգ-Կոնգ. 8 մայիսի, Հինգ հազար չինական զօրքեր Քանտոնից դուրս եկան Քորմոզա գնալու համար, այն նպատակով որ դէմ դնեն Սև-դրոշակաւորներին որոնք շատ կարելի է ընդդիմանան ժապոնացոց կղզին գրաւելուն կարծվում է որ ընդհանուրն երբ այդ զօրքը տեղ հասնի, կը միանայ Սև-դրոշակաւորներին՝ ժապոնացոց դէմ։

Լոնդոն. 8 մայիս. Լուր է հասնում որ Ժապոնիան 10 միլիոն ստերլինգ է պահանջում Լիաթունկը չը գրաւելու փոխարէն։

Լոնդոն. 8 մայիս. Մի շատ մեծ միտինգ է եղել ոյժ տալու համար այն անդլիական ազգային բողոքին, որ եղել էր յօդուտ քրիստոնեաների Հայաստանում եղած թիւրքաց բարբարոսութիւնների դէմ։ Միտինգը տեղի ունեցաւ երէկ Սէնտ-Ջէյմ Հօլի մէջ։ Դուքս Արջիլը նախագահում էր, նա շատ ազդու կերպով խօսեց Հայաստանի դրութեան մասին, յայտնելով որ այդ երկիրը ասպարէզ է եղել սարսափելի կոտորածների, աւարառութիւնների՝ թիւրքաց վատ կառավարութեան շնորհիւ։ Վճռված է միաձայն բողոքել թիւրքերի դէմ, այն բարբարոսութիւնների համար, որոնք կատարել են Հայաստանում և սնդել որ շուտով գործադրի Բերլինի 61-րդ յօդուածը։

„ՇԱՒԻՂԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սալմաստ. Եաւրի. Ձեր յօդուածը կը տպւի երևի միայն 3 կամ 4 համար յետոյ։ Բայց շարունակեցէք և ուրիշ մի ամփոփ տեղեկութիւն տուէք մեզ առ հասարակ Սալմաստի հայերի և նրանց հասարակական կեանքի մասին, չը մոռանալով տնտեսականն ու մտաւորականը, յարաբերութիւնը իրենց դրացի ազգաբնակութիւնների հետ և այլն և այլն։

Դավրէժ. Ուրմեցի. Ձեր յօդուածը չի տպւիլ. եթէ կուզէք ուղարկեցէք միւսները, եթէ տեսնենք յարմար կը լինին, կը տպագրենք։

Բագու. Դ. Տէր Զաքարեան։ Յօդուածը կը համառօտենք, իսկ «Զեկուցումը» կը տպւի ամբողջապէս. նա ասում է ամեն բան։

Ուրմիա. Յ. Ձեր անգլերէնից թարգմանածը տպւել է վաղուց «Հայկական աշխարհի» մէջ. չարժէ տպագրել. մի՛ ուղարկէք։ Տեղեկագիրը կը տպւի, բայց քիչ ուշ. ուղարկեցէք շարունակութիւնը։

Ուրմիա. «Հայկունի». Երբ ձեր բուն անունը տուիք, և ասացիք որտեղացի լինելը,—ձեզ շատ լաւ ճանաչեցինք, Էֆէնդի. շատ վատ դեր էք յանձն առել—պաշտպանելով՝ ժողովուրդը հարստահարող հոգևորականների։ Ասորի թղթակից չունենք, եթէ ունենայինք շատ ուրախ կը լինէինք, որ գրէր մեզ ասորիների կեանքից։ Խոստովանեցէք որ ձեր արածը ծիծաղելի է. ուղարկել էք մեզ մի «Հանրագիր», որ ոչ միայն ստորագրութիւն չունի, այլ և ձեր իսկ ստորագրութիւնը կեղծ էք դրել։ Զբաղեցէք աւելի լաւ է ձեր չը բացւելիք որբանոցը բանալով։

Ուրմիա. Ե. Վարդան Սամուէլեանցին, ձեր պատուէրի համաձայն միշտ Խոյ է ուղարկւել. ինչու չեն իմացնում, երբ հասցէն փոխում են. այսուհետև կուղարկենք Ուրմիա, սկսած № 14-ից։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԴ

Երկու կամ երեք ամիս սրտից առաջ յանձնուած է ինձ 771 զրան փող ուղարկելու համար իր նպատակին. գումարը ինձ մօտ է և սպասում եմ ստանալու պէտք եղած հասցէներ, որոնց համար գիմումներ արել եմ հարկ եղած անձերի։ Փողը ստանալու ժամանակ կը յայտարարուի յայանի թերթերում։

Անդրէաս Բէկնազարեանց

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, իր աբբահօր 50-ամեայ յոբելեանի առթիւ հիմնելու է մի արուեստագիտական արհեստանոց «Այտնեան» անունով. արհեստանոցի նպատակն է հայ տղաներ բերել ամէն կողմից և ձեռագործ արհեստներ սովորեցնելով 3—4 տարուայ մէջ վարպետ հանել և ետ դարձնել։

Այդ նպատակի համար յանձաժողով է կազմած, որը և ընդունում է նուէրներ։

Նուէրները կարելի է հասցնել հետեւեալ հասցէով։

Au couvent des RR. PP. Mechitharistes.

VII/2 Mechitharistengasse.4
Vienne (Autriche)

1—3

„ԾԱՂԻԿ"

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Խմբագիր՝ Արշակ Չօպանեան
Հրատարակվում է Կ. Պոլսում. Տարեկան բաժանորդագինն է 40 դրուշ։
Հասցէ. Constantinople Mr. A. Tchobanian. Tchacmactchilér. Hakopian Khan № 9.

1—2

ARA

A journal of literature and of armenian politics and history
Edited and published by
J. D. MELIK BEGLAR

Subscr. for 12 issues—rupees 3 8
,, ,, 6 ,, ,, 2 8
,, ,, 3 ,, ,, 2 0

Adress: Chogda, Bengal, (India)

3—3